Դաս 13. Հայ ժողովրդի ծագման ավանդապատումները

Մեր քաջ նախնի Հայկի կերպարը մշտապես ոգեգնչել է հայ և օտարազգի մշակույթի գործիչների, ովքեր նրա պատվին ստեղծել են արվեստի բազմաթիվ գեղեցիկ գործեր և ձոնել գրական ստեղծագործություններ:

Հայկ Նահապետ

Հայկ Նահապետի արձանը Երևանի խորհրդանիշներից է: Այն կանգնած է Նոր Նորքի 2-րդ զանգվածում՝ Գայի պողոտայի հարևանությամբ: Հայ ժողովրդի անվանադիր նախնու արձանի հեղինակը քանդակագործ Կառլեն Նուրիջանյանն է: Ավանդությունը պատմում է, որ Հայկը հզոր աղեղնավոր է եղել և հանդուգն Բելին փապալել է հենց հեռահար նետահարությամբ: Այդ պատճառով է նա քանդակված հսկա աղեղը ձեռքին, ասես հիմա էլ պաշտպանում է հայոց երկիրը: Հայկը քանդակված է խիստ հայկական դիմագծերով, մարտիկի հսկա ու ամրակազմ մարմնով, հուժկու բազուկներով, իսկ աչքերը

Հայկը խոցում է Բելին, նկարիչ՝ Ջուլիանոս Զասսո

կարծես կենդանի լինեն՝ լի արիությամբ ու նաև թախծով: Նրա թավ հոնքերը ձգված են և վճռականության հետ միասին մի փոքր տխրություն են արտահայտում: